



Գավառ քաղաքի փողոցային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի գլխավոր նպատակն է քաղաքային ներդրումային ծրագրերի և ազգային քաղաքականության իրականացման ճանապարհով Հայաստանի քաղաքներում քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումները, ինչպես նաև ցուցադրել նոր լուսադիոդային տեխնոլոգիաների առավելությունները:

Ցուցադրական փողոց՝ Սայադյան փողոց

Ցուցադրական փողոցների երկարությունը՝ 1.4 կմ

Ֆինանսավորում՝ ՄԱԶԾ-ԳԷՖ՝ (94%), Գավառի քաղաքապետարան՝ (6%)

Սայադյան փողոցի ցուցադրական նախագծի լուսավորության համակարգի ցուցանիշները	Նախկինում Բարձր ճնշման նատրիումային	Ներկայում ԼԵԴ լուսատուներ	Օգուտներ
Լուսատուների քանակը	47	47	
Լուսավորվածության միջին մակարդակը, լյուքս	6	19	Համապատասխանություն նորմերին
Գումարային հզորությունը, կՎտ	13.4	4.37	Նվազում՝ 9.02
Տարեկան էներգասպառումը, ՄՎտժ	23.5	7.7	Խնայողությունը՝ 15.84
Տարեկան ջերմոցային գազերի արտանետում, տCO ₂	10.4	3.4	Կրճատում՝ 7
Շահագործման և սպասարկման տարեկան ծախսեր, ԱՄՆ դոլար	2 223	725	Խնայողություն՝ 1 498

Ցուցադրական նախագծի իրականացման հիմնական օգուտները

- ✓ Փողոցային լուսավորության համակարգի էլեկտրաէներգիայի սպառումը նվազել է մոտ **67%**:
- ✓ Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են **7 տCO₂**:
- ✓ **էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամի ստեղծում** Գավառի քաղաքապետարանում:

Այլ առավելություններ

- ✓ Լուսավորվածության մակարդակը և համաչափությունը համապատասխանեցվել են գործող նորմերին, բարձրացնելով անվտանգության մակարդակը,
- ✓ Հիմնվել է էներգախնայողության, լուսավորվածության և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման մշտադիտարկման թափանցիկ համակարգ,
- ✓ Լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները գնահատվել են և կարող են ներառվել համայնքի էներգետիկ գործողությունների պլանի մեջ: